14. ՄԵՌԵԼԻ ՈՒԼԻՆՔ

Մարթ մի կէղնի, ուրին իրեք աղճիկ կէղնի, ինք խեղճ կէղնի։

Հ՚ըմն օր կէրթա ուրին խրոշ կբերե, օրըմ լե, կէրթա խրոշ բերելու՝ արշ կիգա կը թոնի էդոր վզին։

Կրսե.— Ի՞նչ կիտաս օր քըզի չուտիմ։

Կրսե.— Ընծի բան չկա։

Կրսե.— Քըզի իրեք հատ աղճիկ կա, քելե էրթանք, մեկ տուր ընծի։

Կրսե.— Քելե էրթանք, ո՛ր մեկին կը հավնիս՝ տա՛ր։

Կէրթա ջոջ աղճիկ կը տանի։ Կը տանի ուր բուն։ Կով մի կը մորթե քըրթե բերե հում կթալե աղճկա հ՚առեջ։

Կրսե.—Ես կէրթամ, հար հ՚իրկուն իտա միս կերար, իմ կնիկն ես, չկերար՝ գիգամ քըզի կը մորթեմ։

Աղճիկն է կելնի կը կրտրռտե կը լնու ակ։

Հ՚իրկուն գիգա, կրսե.— Կերա՞ր։

Կրսե.— Հա՛։

Կրսե.— Կանչե՞մ։

Կրսե.— Կանչե։

Արշ կրսե.— Մսիկ, գո՞ը իս։

Կրսե.—Մսիկ մըջ ական է։— Կելի կաչքե օր միս մեջ ական չցուկ է։

Կելնի աղջիկ կը մորթե կըլնա էռման ջուր կը խաշխըռնե կը տանե կը թափե։

Կէրթա խրոշի տեղ, էմ լե կը թոնի մարդու շալակ։

Կրսե.— Ի՞նչ կիտաս քըզի չուտիմ։

Կըսե.— Ընծի բան չկա, մանցեր են էրկու աղճիկ, քելե էրթանք, ո՛ր մեկին հավնար՝ տա՛ր։

Կէրթա, միշնեկ աղճիկ կառնե տանի։

Էլման կով մի կը մորթե, ջանդակ մի միս կը բերե թալե հ՚առնչ։

Կըսե.— Կերար, իմ կնիկն ես, չկերար, քըզի խաշխըռնեմ, թափեմ։

Էլման կը մանդրե, կըլնա ական մեջ։

Հ՚իրկուն արջ գիդա, կըսե.— Կերա՞ր։

Կըսե.— Հա՛։

Կըսե.— Կանչե՞մ։

Կըսե.— Կանչե։

Կըսե.— Մսիկ, դո՞ր իս։

Մսիկ կըսե.— Մըջ ական է մսիկ։

Էդ քուր լե կելնի կը խաշխըռնե, կտանե թափե։

Կէրթա խըռշի տեղ մեկել օր, էմլե կը թռնի մարդու շալակ։

Կըսե.— Ի՞նչ կիտաս քըզի չուտիմ։

Կըսե.— Բան չունիմ։ էն մեկ աղճիկ ունիմ, դուն քու աստված, քելե էրթանք է՛ն լե տար։

Կէրթա, կառնե էն աղճիկ լե, կէրթա։ Կէրթա կես ճամբախ, պառավ մի գիդա ռաստ։

Կըսե.— Աղճի՛, աղճի՛, արի հ՚ուտա, քըզի բան կըսիմ ու գնա։

Արջուն աղճիկ լավա գընկնա, կըսե.

— Թո՛ղ էրթամ, իմ մորքուրն է, տեսնամ ի՞նչ կըսա, գամ էրթանք, ես քու ձեռքեն հ՚ո՞ւր կը պրծնիմ։

Արջ կը թողե, աղճիկ կէրթա։

Պառավ կըսե.— Աղճի՛, էդ առջ քու էրկու քուր լե տարեր, ջանդակ մի միս թալեր հ՚առեջ ուրանց, ըսեր է. «Կերա՞ք, իմ կնիկն իք, չկերա՞ք, ձըզի կը մորթեմ». ընգոնք լե չկերած են, մորթեր խաշխըռներ, թափեր է,— կըսե,— առ իտա կատուն, ու իտա չախուն, իտա մեռլի ուլինկ, կապե քու պառեկի մեջ ու տար,— կըսե,— օր, միս բերեց թալեց քու հ՚առեջ, մանտրե լից էդա կատուի հ՚առեջ, թըղ ուտե. մեռլի ուլինկ լե, կելնիս տանիք, արջ կը պառկի քու չոքին, կըսե. «Իմ գլուխ քթվե», ու ինք կը քնի, կը թալիս անկաճ, կելնիս կփախնիս կէրթաս, օր ազատվիս, թե չէ քըզի լե կէնե մեկել քուրվըտոց պես։

Կէրթա, կընկնի արջու հետ կէրթա։

Արջ կըսե.— Քզի ի՞նչ ըսեց քու մորքուր։

Կըսե.— Ըսեց արջու խոսքով էղի, արջ ինչ կըսա, խոսքից չելնիս։

Կէրթան արջու բուն, արջ կը բերե կով մի, կը մորթե, կը թալե աղճկա հ'առեջ։

Կըսե.— Կերա՛ր, իմ կնիկն ես, չկերա՛ր, քըղի լե կէնիմ մեկել բուրվտոց պես,— ու ինք կէրթա։

Աղճիկ կելնի կը մանդրե, կըլնա կաավի հ'առեջ, կատուն կուտե։

Հ'իրկուն գիգա արջ, կըսե.— Կերա՞ր։

Կըսե.— Հա՛։

Կըսե.— Կանչե՞մ։

Կըսե.— Կանչե։

Կըսե.— Մսիկ, դո՞ր իս։

Կըսե.— Մսիկ խազար թերթկի մեջն է։

Էն լե կուրախնա, դինա թե ուր կնիկն է կերի, կելնի կը փաթվի կնկա վիզ՝ կըսե.— Գիցա, օր իմ կնիկն ես։

Կը մնա օր մի էրկու, օր մը լե կըսե.

— Քելե էրթանք տանիք, իմ գլուխ դիր քու չոքին փշու մի քթվե։

Կելնին տանիք, գլուխ կը դնե կնկա չոքին, կնիկ գլուխ կը մաժե, հարի քնի, կը հանե մեռելի ուլինկ ձեպեն, կը թալե անկաճ, ուշիկ մի չոք կը քաշե կը դնե գետին, ու ինք կելնի կը փախնի։

Կէրթա թագավորի փողոց, կոճ մի կը գտնի, կը մտնի մըջ էդ կոճին։

Օրըմ լե էրկու, թագավորի տղեն կը տեսնա օր էդ կոճի միջեն հուրնիկ հրեղեն աղճիկ մի կելնի դուրս ու կը մտնի կոճի մեջ։

Թագավորի տղեն նիաթ կը կախե, կը քըրպոտի, կէրթա ու գիգա։

Թագավոր կըսե.— Տղա՛, դու հ'որի՞ քու նիաթ կախեր իս, արի քըզի կարգիմ,— կըսե,— վի՞ր աղճիկ կառնես, ո՛ր կառնես, ըսե կարգիմ։

Տղեն կըսե.— Ես կառնիմ իգա մեր փողցի կոճ։

Թագավորն ու ուր կնիկ կը քըրպոտին, կելնին մտնին կըսին թե.— Հայ հավա՛ր, հայ մադա՛թ, ախըր հըմլա բան չէղնի. դու թագավորի մի տղա էղնիս, էդա կոճն առնի՞ս, ի՞նչ կէնիս։

Ինչ կէնին, տղի վրեն չը կըռնան։

Կելնին, անձեն անձու հարսնիք մի կէնին, կը բերին կոճ կը պսակին վըր աղին։

Կը տանին էդ կոճ կդնեն տղի հ՝օգեն։ Թագավորն ուր կնիկ կը քըրպոտին, կը քաշվին ստնին ուրանց հ՝օդեն, կը մնան քենիմ օր։ Օր մի թադավոր կըսե ուր կնկան.

— Կնիկ, էրթանք գողտուկ, դռան հ՝ետևեն աչքինք տեսնանք էդ կոճ ի՛նչ կէնա մըր տղեն։

Կէրթան կանին դռան հ՝ետև, կաչքին կը տեսնին օր, կոճի միջևն Հուրնիկ-հրեղեն աղճիկ մի կելնի կը մտնի տղի ծոց, օր չուտիս չխմիս՝ ուրին թամաշա էնիս։

Էնտեղ թադավորն ու ուր կնիկ կուրախնան. մեկ լե յոթն օր, յոթ գիշեր հարսնիք կէնին, թաժատան կը պսակին, քեֆ ուրախութեն կէնին։

Կը մնան օր մի, արջ սալըխ կառնի օր, էդի ուր կնիկն է։

Թագավորի տղեն կըսե.— Էդ կոճ կը կոտոտեմ, վառեմ։

Աղճիկ կըսե.— Չէ, իմ կոճ մը՛ վառե, վառեցիր, ես կը վնասվիմ։

Թագավորի տղի հետ չէղնի, կէրթա դիգա, կըսե. «Կը վառեմ», աղճկա ճար լե կը կտրի, կթողե օր վառե։

Օր մի արջ կէղնի հուրնիկ-հրեղեն խոզ մի, գիգա թագավորի տղի փանջարի տակ կը կայնի։ Աղճիկ դինա օր արջն է։

Տղեն կըսե.—Հ՝ելնիմ, իտա խոզ քշիմ մեր թավլեն։

Աղճիկ կըսե.— Մ՝ելնի քշի, էդի դիգա, ընծիկ կը վնասե,— կըսե, շատ կաղաչե,— խուրբան, հայրան ըմ քըզի, էդի արջ է, գիգա ընծի կը վնասե։

Թագավորի տղեն օր չբերե ներս, խոզ կը թորկե կէրթա։

Կը մնա, էն մեկել հ՝իրկուն կէղնի հուրնիկ-հրեղեն կով մի, գիդա։

Թագավորի տղեն կըսե.— Խոզ հ՝ելավ իմ ձեռքեն, բալե կով կելնեմ քշեմ թավլեն։

Աղճիկ կըսե.— Խուրրան, հայրան, մ՝ելնի քշի, էդի էմլե էն արջըն է, գիգա ընծի կուտե։

Հալա կով լե կը թողե կէրթա։

Կը մնա, էն մեկել հ՝իրկուն կէղնի հուրնիկ-հրեղեն քուռակ մի, ու գիդա կը թրովրոկա փանջարի տակ։

Կըսե.— Նա՛ ըսե, նա՛ զրուցե, էլ չարա չկա, ես կելնիմ իդա քուռակ կէնիմ թավլեն։

Աղճիկ լե չկեռնա վրեն։ Կըտանե թավլեն կապե։

Գիշեր մի թավլից կելնի գիգա հ՝օդեն։

Կըսե.— Հ'ելի, հ'ընկի իմ ետև էրթանք, դու խաբեցիր, զիս քնցուցիր, թողիր էկա՞ր։

Աղճիկ կըկանչե թագավորի տղին, կըսե.— Հ'ելի տես, ձին լկեր է ընծի կը կանչե տանե։

Աղճիկ օր հըմալ կըսե, արշ կէղնի քուռակ, կէրթա մտնի թավլեն։

Էն մեկել հ'իրկուն մեկ լե հըմալ կէնի։

Էլման էդ աղճիկ կը կանչե թագավորի տղին, կըսե.—Հ'ելի տես, քուռակն էկեր է ընծի կը տանե։

Արշ կէղնի քուռակ կէրթա մտնի թավլեն։

Կը մնա, էն մեկել հ'իրկուն էլման կը քնին, կէրթա արշ կը քաշե աղչկան կը բերե գրֆ կիտա, կըսե.

— Կայնի, ես քըզի մորթեմ, խաշխըռնեմ, տանեմ թափեմ։

Կը դնե օճախ կը վառե, պղինձ կը դնե վրեն, ջուր կըլնա մեջ, կը դնե ջուր կէռա։

Աղճիկ կըսե.— Դու ու քու աստված, թող հ'ելնիմ դուրս, մեկ լե գամ խաշխըռնե, էլ դո՞ր քու ձեռեն կը պրծնիմ։

Կելնի դուրս, թագավորի տղեն լե ուր հ'օդեն քնուկ կէղնի։

Աղճիկ կելնի դուրս, իրեք բերան կըսե.— Սարեր, ձորեր, ձե՛ն մի տվեք, սարեր, ձորեր ձե՛ն մի տվեք, սարեր, ձորեր ձե՛ն մի տվեք։

Էն մեկ թարաֆեն ձեն մի գիգա։

Կըսե.— Ցա՜վ, խո՜ց, գնա ինա տեղ մեռելի հող կա, տար թալ թագավորի տղի հ'երդրկեն, կը հ'իմնա, կազատվիս։

Կէրթա, ճանկ մի մեռելի հող կը տանե թալե ուր իրկա հ'երդրկեն, կը հ'իմնա, կը տեսի օր կնիկ ուր ծոց չէ։

Կըսե.— Վոլլահի արշ տարեր է, իմալ օր կելնի դուռ կը բանա, արշ կէղնի էմլան քուռակ, կէրթա կը կապվի թավլեն։

Աղճիկ գիգա ներս, կըսե.— Տե՛ս, ես հըմալ մի քըզի ըսի մը՛ բերի ներս, գիգա ընծիկ կը վնասե, դու անկաճ չէրիր, բերիր կապիր թավլեն, չավտաս, արի էրթանք օճախ տամ քըզի նշանց, ջուր էռցուցեր էր, օր ընծի խաշեր, թափեր։

Նոր թագավորի տղեն կէրթա տեսի օր օղորդ է, կէրթա քուռկուն կբերե թագավորի տղեն թավլից, կը մանտրե կը հ'ըլնա էդ էման ջրի մեջ, կը խաշխըռնե, տանի թափե։

Նոր ըտոնք կը հասնին ուրանց մուրազին, մենք լե մեր։

Աստծուց իշավ իրեք ինձոր. մեկ ըսողին մեկ լսողին, մեկ լե անկաճ էրողին։